«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ	3
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	5
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՆՊԱՏԱԿ, ՏԵՍԼԱԿԱՆ	7
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	8
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ	14
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	15
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ	17
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ	20
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ	29
ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ	30
ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33

ՀՐԱՆՏ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն

2015 թ-ին « Գազպրոմ» ՀԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համատեղ ջանքերով մեկնարկեցին Ուսումնա-սպորտ ային համալիրի կառուցման աշխատանքները:

Մեր ընկերության պատմության և լայնածավալ գործունեության մեջ 2019 թվականն իր ուրույն տեղում է գտնվում Ուսումնա-սպորտային համալիրի բացումով: Պետք է արձանագրել, որ մենք պատվով ենք կատարել մեր առաջ դրված խնդիրը, որի արդյունքում համալիրն իր տեսակով հավասարը չունի մեր երկրում ու ողջ տարածաշրջանում: Այսօր արդեն իրականություն դարձած մեր համալիրն իր տեսակի մեջ եզակի է, եզակի իր լաբորատորիաներով, դասարաններով, նյութատեխնիկական գերհագեցվածությամբ, սպորտային ուղղություններով, արվեստի ճյուղերով և այլ հնարավորություններով:

Ներկայումս համալիրում իրենց աշխատանքային գործունեությունն են ծավալում կրթության և սպորտի բնագավառի բարձր որակավորում ունեցող լավագույն մասնագետները: Իմ համոզմունքն է, որ կրթությունն ամենաթանկ կապիտալն է, ամենաարդարացված ներդրումն ու առաջընթացի նախապայմանը: Ստանձնելով որակյալ կրթություն ապահովելու կարևոր առաքելությունը՝ «Գազպրոմ Արմենիա» ընկերության Ուսումնա-սպորտային համալիրը վստահաբար մեծ դերակատարում է ունենալու կրթված, մրցունակ և առողջ սերունդ ձևավորելու գործում:

Վստահ եմ, որ ղեկավարության և անձնակազմի պրոֆեսիոնալ, նվիրված ու ամենօրյա համառ աշխատանքի արդյունքում համալիրը կդառնա իր ոլորտի առաջատարն ու օրինակելին՝ ինչը բնորոշ է «Գազպրոմ Արմենիային»:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրեն

2019 թվականին կյանքի կոչվեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Ուսումնա-սպորտային համալիրը, որի գործունեության մեկնարկը վստահված էր մեզ: Այս առանցքային իրադարձությունը բոլորիս համար շատ կարևոր ու պարտավորեցնող է: Հավատում եմ, որ անբասիր պատմական ուղի կերտելու մեր քայլերը հաջողվելու են, քանի որ մեկտեղելու ենք բոլորիս ջանքերը և դա լինելու է բոլորիս հաջողությունը: Մեր համալիրն իր մեջ ներառում է դպրոց, մանկապարտեզ, սահադաշտ, մարզաառողջարարական կենտրոն և լողավազան, որոնք նախատեսված են ինչպես մեր դպրոցի աշակերտների, այնպես էլ բոլոր օգտվել ցանկացողների համար: Մեր համալիրն իր բոլոր հնարավորություններն օգտագործում է առաջնային նպատակի՝ սաների հնարավորությունների հավասար զարգացումն ապահովելու համար: Մեր առաջ որպես օրակարգային հարց դրված էր կադրային ճիշտ քաղաքականության իրականացումը, և այսօր արդեն մեր համալիրում աշխատում են կրթության ու սպորտի բնագավառի վաստակաշատ մասնագետները: Մեր համալիրի յուրաքանչյուր աշխատակից իր աշխատանքային ոլորտում փորձառու է, նորարար և ամբողջովին նվիրված իր գործին: Վստահ եմ, որ ունենալու ենք թռիչքային զարգացումներ, գիտելիքների մեծ պաշար ունեցող և պատվո հարթակների ամենաբարձր աստիճանին կանգնող աշակերտներ, մրցունակ շրջանավարտներ, որոնք կլինեն գիտելիքահեն հասարակության հիմքն ու Հայաստանի ապագան:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի ապրիլի 16-ին՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, տեղի ունեցավ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Ուսումնա-սպորտային համալիրի հիմնարկեքի արարողությունը, որին մասնակից էին Հայաստանի Հանրապետության նախագահը, «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարչության նախագահները:

Իր տեսակի մեջ նմանը չունեցող կրթահամալիրի կառուցումն իրականացվել է «Գազպրոմը՝ երեխաներին» լայնածավալ ծրագրի շրջանակում, իսկ ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվել է «Գազպրոմ» ՀԲԸ կողմից:

2016 թվականի ապրիլին արդեն մեկնարկել էր Ուսումնա-սպորտային համալիրի շինարարությունը, որը տևեց շուրջ երեք տարի:

2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՀԱՄԱԼԻՐԻ **ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ՕՐԸ՝**
ԱՊՐԻԼԻ 16-Ը, ԱՅՍՈՒՀԵՏ ԿՆՇԱՆԱՎՈՐՎԻ
ՈՐՊԵՍ ԱՄԵՆԱՄՅԱ **ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՕՐ:**

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ

ՈՒՍՀ առաքելությունը՝ ազատ, ներդաշնակ զարգացող, ստեղծագործ և մտածող անձի ձևավորում:



Տեսլականը՝ դառնալ Հայաստանի մասնավոր հանրակրթական հաստատությունների շրջանում առաջատարներից մեկը՝ ընձեռելով լավագույն հնարավորություններն առողջ երեխաների ազատ ու ներդաշնակ զարգացման համար:

Նպատակը՝ ստեղծել անվտանգ և առողջ միջավայր, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը նպաստող գիտելիքներ և սոցիալական հմտություններ:

ԿԱՌՈՒՅՑ ԱՇՔ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ ՓՈՂՈՑԻ 55/25 ՀԱՍՑԵՈՒՄ՝

31,841Մ² ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ

ՈՒՍՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

- կրտսեր 1-ին խումբ (2-3 տ.)
- կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- միջին խումբ (4-5 տ.)
- ավագ խումբ (5-6 տ.)

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

- փակ սահադաշտ
- մարզասրահներ
- լողավազաններ՝

դպր. (25մ x 12.5մ), մանկ. (6,1մ x3,1մ)

- խաղային ձևերի դահլիճներ
- բաց խաղահրապարակ

ԴՊՐՈՑ

- տարրական դպրոց (1-4 դաս.)
- հիմնական դպրոց (5-9 դաս.)
- ավագ դպրոց (10-12 դաս.)

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան

ԿԱՐԵՆ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ ֆինանսների և էկոնոմիկայի գծով

ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՔՎԱՆՏ» վարժարանի տնօրեն

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ

ՀԱՕԿ նախագահի խորհրդական

ՍԱՄՎԵԼ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի տնօրեն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խորհրդի նախագահ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ՈՒՍՀ տնօրեն

Ե. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՈՒՍՀ տնօրենի տեղակալ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով

Է. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Խորհրդի քարտուղար, ՈՒՍՀ դպրոցի ուսուցչուհի

Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Բնագիտության ամբիոնի վարիչ

Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Մաթ. և ֆիզիկայի ամբիոնի վարիչ

Թ. ԱՌՈՒՇԱՆՈՎԱ

ՈՒՍՀ դպրոցի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

Ի. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Օտար լեզուների ամբիոնի վարիչ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

Լ. ՖԼՋՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Արվեստի ամբիոնի վարիչ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒՂՂՎԱԾ Է ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ, ԴՊՐՈՑՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԱՅՆՈՐԵՆ ՄՏԱԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳԻՐՆ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է՝

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

- ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
- ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
- ԵՍ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՐՀԸ
- ՌՈՒՍԵՐԵՆ
- ԱՆԳԼԵՐԵՆ
- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
- ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ
- ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆ
- ԼՈՂ
- ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.ՄՈՒԱ

2.ՀՈՒԱ

3.ՖՈՒԱ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ:

1. ՄՈՒԱ - ՄՏԱՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ՖՐԱՆՍԵՐԵՆ
- ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
- ՉԻՆԱՐԵՆ
- ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
- ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ
- ՄԵՆԹԱԼ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
- ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.ՀՈՒԱ - ՀՈԳԵՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
- ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԱՐՏՏԵԽՆՈԼՈԳԻԱ
- ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
- ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
- ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

3. ՖՈՒԱ - ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ԼՈՂ
- ԳԵՂԱՍՍԱՀՔ
- ՖՈՒՏԲՈԼ
- ՇԱԽՄԱՏ
- ՊԱՐ
- ԲԱՍԿԵՏԲՈԼ
- ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ



ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

26 =



13 ՏՂԱ

13 ԱՂՋԻԿ

- Կրտսեր 1-ին խումբ (2-3 տ.)
- Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- Միջին և ավագ խումբ (4-6 տ.)

ԴՊՐՈՑ

13 ՂԱՍ.
=
202 ԱՇ.



105 ՏՂԱ

97 ԱՂՋԻԿ

- Տարրական — 8 դասարան (118 աշակերտ)
  - I դասարան - 4
  - II դասարան - 2
  - III դասարան - 2
- Միջին — 4 դասարան (80 աշակերտ)
  - V դասարան - 1
  - VI դասարան - 1
  - VII դասարան - 1
  - VIII դասարան - 1
- Ավագ — 1 դասարան (4 աշակերտ)
  - X դասարան - 1

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՆԵՐԸ



ԴՊՐՈՑԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ



2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇԱՐԺ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴԱՍԱՐԱՆ										ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	ՈՒՍՀ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ	ՈՒՍՀ ԴՊՐՈՑԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ
Ա. ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ № 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ		2	12		1	4	4	2		2	27	11
Ա. ՁԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ № 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ		6	1		3	2	1	2			15	1
Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ № 19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ			7		1	1	3	1			13	3
«ՇԻՐԱԿԱՑՈՒ» ՃԵՄԱՐԱՆ		3	3			2		5			13	1
«ԱՅԲ» ԴՊՐՈՑ			2		3		2	1			8	0
Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ № 51 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ		1	2		2	2					7	3
«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆ	1	3			1	1		1			7	1
«ԳԼՈԲԱԼ ԲՐԻՋ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ	2	2	2					1			7	2
«ՈՒՍՈՒՄ» ԴՊՐՈՑ			3		1		1				5	3
«ՈՒՍՄՈՒՆՔ» ԴՊՐՈՑ (ՀՈՀ-ԻՆ ԿԻՑ)		1	1					1		1	4	0
ԸՆԴԱՄԵՆԸ՝											106	25

2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

177

ԿԱՆԱՅՔ	ՏՂԱՄԱՐԴԻԿ
119	58
67%	33%

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԵԼ Է 177 ԱՇԽԱՏԱԿԻՑ ԵՎ 124.4 ԴՐՈՒՅՔ, ՈՐԻՑ

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ԴՐՈՒՅՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ	29	28,5
ԴՊՐՈՑ	94	47,9
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	21	16
ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	14	14
ՓԱԿ ՍԱՀԱՊԱՇՏ	19	18
ԸՆԴԱՄԵՆԸ՝	177	124,4

ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ **32-Ը ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ**, ՈՐՈՆՑԻՑ 27-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ 5-Ը ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ:

ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ. 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԶՁԱԿԱՆ ԿԱԶՄ

- ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ — 7
- ՍՊՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՊԵՏ — 1
- ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ — 1
- ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ — 1

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ



- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ֆինանսավորում - 665,878,207.6
- Դպրոց - 267,415,472.0
- Սպորտային ծառայություններ - 34,612,218.9
- Մանկապարտեզ - 9,130,150.0

ԾԱԽՍԵՐ



- Աշխատավարձի ֆոնդ - 473,605,614,1
- Շենքերի սպասարկում - 130,850,000
- Կոմունալ վճարներ - 110,520,317,43
- Սնունդ - 36,797,440
- Այլ ծախսեր - 225,262,677

977,036,048.5

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- 2019-2020 ուս. տարում դպրոցի ուսուցիչները անցան մի շարք վերապատրաստումներ: Տարրական դպրոցի բոլոր ուսուցիչների համար կազմակերպվեցին 36-ժամյա վերապատրաստման դասընթացներ նպատակաուղղված դասավանդման մեթոդների յուրացմանը՝ անձի համակողմանի զարգացման հայեցակարգի շրջանակներում: 2019թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բոլոր դասվարներն ու նրանց օգնականները, ինչպես նաև հոգեբանները 16-ժամյա վերապատրաստման դասընթացներ են անցել ոլորտի առաջատար մասնագետների կողմից:

- 2020թ. հունվարին ՈւՍՀ-ի տնօրեն Ա. Կ. Գրիգորյանը Հելսինկիում մասնակցել է «ֆենոմենակենտրոն ուսուցում (PhBL)» վերապատրաստման ծրագրին:

- COVID-19 համավարակով պայմանավորված, 2020 թ. դպրոցի ամբողջ անձնակազմն անցավ վերապատրաստման դասընթացներ՝ թվային տեխնոլոգիաների կիրառման ոլորտում:

- 2020թ. ամռանը ՈւՍՀ-ի դպրոցի և մանկապարտեզի 4 աշխատակիցներ մասնակցեցին «Ֆինլանդիայի, Շվեդիայի և Էստոնիայի կրթության համակարգը» առցանց վերապատրաստման ծրագրին:

ԿՐԹԱԹՈՇԱԿ

2020 թվականից ՈՒՍԱՀ-ն կրթաթոշակներ է սահմանել այն աշակերտների համար, որոնք ուսումնական տարվա ընթացքում աչքի կընկնեն ակադեմիական առաջադիմությամբ, սպորտի և արվեստի բնագավառի ձեռքբերումներով:

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԿՐԹԱԹՈՇԱԿ՝ 600 000 ԴՐԱՄ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ՝ 250 000 ԴՐԱՄ

«ԳԱՁՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԿ 6-ՐԴ ԴԱՍ.

ՀԱՍՐԱԹՅԱՆ ԷՐԻԿ 4-ՐԴ ԴԱՍ.

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



ՄՈՎՍԵՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ 4-ՐԴ ԴԱՍ.

ԹՈԽՈՒՆՑ ՄԱՐԻՆԱ 4-ՐԴ ԴԱՍ.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ 4-ՐԴ ԴԱՍ.

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԻԴԱ 6-ՐԴ ԴԱՍ.



ԱԹԱԲԵԿՅԱՆ ՌՈԲԵՐՏ 8-ՐԴ ԴԱՍ.



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷՐԻԿԱ 6-ՐԴ ԴԱՍ.

ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԱՆԱ 8-ՐԴ ԴԱՍ.

ԿԱՐԱՅԱՆ ՀԱՄԼԵՏ 9-ՐԴ ԴԱՍ.

ՔԱՐԱՄՅԱՆ ԱՐԵԳ 9-ՐԴ ԴԱՍ.

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցած ուսումնական տարին թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների, թե՛ ՈՒՍՀ-ի վարչակազմի համար լի էր իրադարձություններով: Չնայած դպրոցի գործունեությունը սկսելու հետ կապված բոլոր մարտահրավերներին, ուսուցիչներն ու վարչակազմը մեկտեղեցին բոլոր ջանքերը՝ դպրոցում ուսուցումը հետաքրքիր և գրավիչ դարձնելու համար: Տարվա ընթացքում անցկացվել են մի շարք միջոցառումներ և հանդիպումներ նշանակալի մարդկանց հետ, որոնց ընթացքում աշակերտները հանդես են եկել որպես ակտիվ մասնակիցներ:

Սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի օրը, տեղի ունեցավ լայնամասշտաբ միջոցառում, որով պաշտոնապես մեկնարկեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Ուսումնա-սպորտային համալիրի գործունեությունը:

Սեպտեմբերի 21-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը բաց դաս անցկացրեց մեր կրթահամալիրի աշակերտների համար՝ նվիրված ՀՀ Անկախության օրվան: Նա հույս հայտնեց, որ նման պատմական իրադարձությունները լավ ավանդույթ կդառնան նորաբաց դպրոցում և կամրապնդեն ազգային ինքնությունը:

Տարրական դպրոցի աշակերտները ևս անմասն չմնացին տոնից՝ դպրոցի բակում կազմակերպելով թեմատիկ կավճանկարչություն:

Հոկտեմբերի 25 Չինական մշակույթի օրերի շրջանակում Ուսումնա-սպորտային համալիր հիմնարկ էին այցելել Դիլիջանի միջազգային դպրոցի օտարերկրյա ուսանողները: Նրանք հանդիպեցին չինարեն ուսումնասիրող աշակերտներին և ծանոթացրին նրանց չինական մշակույթին:

2019 թվականի նոյեմբերին Սոչիում տեղի ունեցած մենթալ թվաբանության միջազգային օլիմպիադայի մասնակիցների թվում կային նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Ուսումնա-սպորտային համալիրի դպրոցի աշակերտներ Նատալի Աքսյանը (1-ին դաս.), Գևորգ Գյուլխասյանը (3-րդ դաս.) և Ռաֆայել Մովսեսյանը (3-րդ դաս.): Նատալին զբաղեցրել է 1-ին տեղը, Գևորգը՝ 2-րդ, իսկ Ռաֆայելը նվաճել է «Սուպեր չեմպիոնի» տիտղոսը:

Նոյեմբերի 19-ին մեր մարզաառողջարարական կենտրոնի մարզիչներից Հովհաննես Դավթյանը Մաս-ռեսթլինգ սպորտաձևում՝ 29 երկրների հավաքականների պայքարի արդյունքում, նվաճել է աշխարհի գավաթը:

Նոյեմբերի 28-ին Կոմիտասի 150-ամյակին նվիրված միջոցառում էր կազմակերպվել Ուսումնա-սպորտային համալիրի դպրոցում: Միջոցառմանը նախորդել էր այց Կոմիտասի թանգարան-ինստիտուտ:

Դեկտեմբերի 18-ին օլիմպիական չեմպիոն, աշխարհի եռակի և Եվրոպայի քառակի չեմպիոն, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային դեսպան Արթուր Ալեքսանյանը հյուրընկալվել էր «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Ուսումնա-սպորտային համալիրում:

Հանդիպման ընթացքում աշակերտներն իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխանները ստացան հենց Արթուր Ալեքսանյանից և իր մարզչից՝ Գևորգ Ալեքսանյանից, ով նաև Արթուրի հայրն է:

Աշակերտների հետ նա կիսվեց նաև հաջողությունների հասնելու իր բանաձևով, որն է՝ աշխատասիրություն, ձգտում ու պատասխանատվություն:

Դեկտեմբերի 20-ին մեր կրթահամալիրում Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների նախաշեմին կազմակերպվել էր ամանորյա միջոցառում, որին բոլոր դասարաններն իրենց մասնակցությունն ունեին տարաբնույթ երաժշտական ու պարային համարներով: Տոնական համերգից հետո աշակերտների ծնողները և կրթահամալիրի աշխատակիցները մասնակցեցին բարեգործական ցուցահանդես-վաճառքին՝ որտեղ ներկայացված էին կրթահամալիրի աշակերտների ձեռագործ իրերը՝ նկարներ, կավից և այլ նյութերից պատրաստված տոնական զարդարանքներ, որոնց վաճառքից ստացված ողջ հասույթը՝ 1 040 000 դրամը փոխանցվեց Տավուշի մարզի, Չորաթան գյուղի՝ Ա. Ուդումյանի անվան միջնակարգ դպրոցին:

Վաճառքից ստացված ողջ հասույթը՝ 1 040 000 դրամը փոխանցվեց Ա. Ուդումյանի անվան միջնակարգ դպրոցին:

Դեկտեմբերի 27-ին մեր համալիրի սահադաշտում՝ Ամանորին ընդառաջ, կազմակերպվել էր տոնական միջոցառում, որի ընթացքում իրենց ցուցադրական ելույթներով հանդես եկան և՛ համալիրի դպրոցի աշակերտները, և՛ մեր գեղասահքի խմբակ հաճախող սաները:

Հունվարի 16-ին Ավստրիայի Գրաց քաղաքում անցկացվեց Եվրոպայի գեղասահքի տղամարդկանց մենասահքի առաջնությունը, որտեղ մեր մարզիչ Սլավիկ Հայրապետյանը՝ ով ներկայացնում էր Հայաստանը, կարճ և ազատ ծրագրերի հանրագումարով 26 երկրի 35 մասնակցի պայքարում գրավեց 18-րդ հորիզոնականը: Հաղթահարելով նախնական փուլը՝ 66.89 միավորով մտավ եզրափակիչ, իր ցուցանիշներով մտնելով առաջին 24 մարզիկների շարքը:



Հունվարի 28-ին մեր կրթահամալիրում Հայոց բանակի կազմավորման 28-ամյակի առթիվ կազմակերպվել էր տոնական համերգ-միջոցառում, որին ներկա էր Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը, նույն ինքը՝ Կոմանդոսը: Միջոցառման ընթացքում աշակերտներն իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցեր ուղղեցին և պատասխանը ստացան հենց Կոմանդոսից: Մեր օրերի կենդանի հերոսն իր կյանքի ուշագրավ պատմություններով կիսվեց ներկաների հետ, պատմեց հայտնի «Հարսանիք լեռներում» գործողության, մարտական ընկերների, պատերազմի դժվարությունների և հաղթանակի բերկրանքի մասին:

Հանդիպման ավարտին դպրոցի աշակերտները Կոմանդոսին նվիրեցին իր՝ իրենց իսկ ձեռքով նկարած դիմանկարը: Հանդիպումը կենդանի դաս էր մեզնից յուրաքանչյուրի համար և կոչ՝ կյանքերի գնով ձեռք բերվածը ամուր պահելու:

Փետրվարի 13-ին կրթահամալիրում նշվեց Տյառնընդառաջ եկեղեցական տոնը, որին մասնակից էին բոլորը՝ համալիրի սաները, ուսուցիչները և աշխատակիցները: Օրվա խորհրդին համապատասխան, դպրոցի բակում խարույկ վառվեց՝ ազգային երգ ու պարի ուղեկցությամբ:

Փետրվարի 18-ին «Հայ հին վիպաշխարհը» թեմայով դասին 6-րդ դասարանում աշակերտները մարմնավորել էին հայկական դիցարանի աստվածներին, ինչը վիպաշխարհը ճանաչելու ավելի տպավորիչ մեթոդ է: Ներկա ծնողները փաստեցին, որ բարձր են գնահատում ուսուցչի՝ Արսեն Վարդանյանի ջանքերն ու մեծ նվիրումը գործին ու տանն անգամ նկատում են երեխաների հետաքրքրությունների դրական փոփոխությունները, սերը դեպի ընթերցանությունը և առարկան:

Փետրվարի 19-ին գրքի, ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունն ու սերը մեծացնելու նպատակով ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, Հայաստանում նշվում է որպես Գիրք նվիրելու օր: Տոնի կապակցությամբ մեր կրթահամալիրի սաները պատրաստել էին գեղեցիկ միջոցառումների շարք, որի ընթացքում պատմեցին գրքի ծագման մասին, ներկայացրեցին Թումանյանի ստեղծագործական ուղին և նրա հասարակական գործունեությունը:

Բեմադրեցին «Կիկոսի մահը» հեքիաթը, խոսվեց գրքի, ընթերցանության մասին՝ կարևորելով այն փաստը, որ գրագետ և բազմակողմանի զարգացած մարդ լինելը հզոր պետության և գրագետ հասարակության գրավականն է: Տոնի ավարտին ավանդութի համաձայն սաները միմյանց գրքեր նվիրեցին:

Փետրվարի 21-ին Մայրենիի օրվան նվիրված դպրոցի 3-րդ դասարանի աշակերտներն այցելել էին Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, իսկ 5-րդ դասարանում կազմակերպվել էր դաս-վիկտորինա:
Դասի ընթացքում աշակերտները ներկայացրին մայրենիին նվիրված բազմաթիվ ասույթներ ու բանաստեղծություններ, խոսեցին հայոց լեզվի պատմության մասին: Այնուհետև ուսումնական վիկտորինայի արդյունքում հաղթած խմբի անդամները պարգևատրվեցին գովասանագրերով:

Մայրենին անաղարտ պահելու և գեղեցիկ խոսելու մշակույթը տարածելու նպատակով՝ մայրենի լեզվով ամենագեղեցիկ ու գրագետ խոսող աշակերտները ևս արժանացան գովասանագրերի:

Մարտի 17-ից՝ ՀՀ ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված մեր կրթահամալիրը ևս անցավ հեռավար ուսուցման:



Մայիսի 9-ին Հայ ժողովրդի համար եռատոն է՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձն է:

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ!!!

Հունիսի 6-ին՝ Ռուսաց լեզվի օրն է: Մեր դպրոցում աշակերտները տարաբնույթ դասարանական միջոցառումներով նշեցին Ռուսաց լեզվի օրը, որը Ա. Ս. Պուշկինի ծննդյան օրն է:

ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, Փ. ՇԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ 55/25
WWW.GAUS.AM
INFO@GAUS.AM

ԴՊՐՈՑ՝ +374 12-620-626
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ՝ +374 12-620-624
ՍԱՀՄԱՆՇՏ՝ +374 12-620-631
ՄԱՐԶԱՍՈՂԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ +374 12 620-630